



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թթ. 0066/05/10թ., 0064/02/10թ.  
Նախագահող դատավոր՝ Ա. Ամիրջանյան

Վարչական գործ թիվ 0066/05/10թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«16» սեպտեմբերի 2010թ.

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով, կազմով

նախագահությամբ՝ դատավոր՝  
դատավորներ՝

Կ. Ղարայանի  
Շ. Օհանյանի  
Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով Արմեն Սմբատյանի վճռաբեկ բողոքը վարչական դատարանի 2010թ. հունիսի 10-ի վճռի դեմ ըստ հայցի Սերգեյ Արեգի Սարգսյանի ընդդեմ ԼՂՀ ոստիկանության ՔՎ քննիչ Ս. Առաքելյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու և Ա.Ն.Սմբատյանից 188.000 դրամ բռնագանձելու մասին և ըստ հայցի Արմեն Նիկոլայի Սմբատյանի ընդդեմ Սերգեյ Արեգի Սարգսյանի՝ հանցագործությամբ պատճառված վնասը բռնագանձելու մասին

### Պ Ա Ր Զ Ե Ց՝

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Սերգեյ Սարգսյանը դիմելով դատարան պահանջել է մասնակիորեն՝ ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Հաղորդի շրջանի քննչական խմբի քննիչ Ս. Առաքելյանի կողմից 06.04.2010թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման՝ «Ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել «Միցուբիշի-Մոնտերո-Սպորտ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ս. Սարգսյանի կողմից ՃԵԿ-ի 72-րդ կետի 5-րդ մասի և ՃԵԱԱ մասին ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով» մասը վերացնել և նյութերն ուղարկել ԼՂՀ ոստիկանության քննչական վարչություն՝ նոր ստուգումներ կատարելու համար:

15.04.2010թ. դատավորի որոշմամբ նշված հայցադիմումով հարուցվել է վարչական գործ և ընդունվել վարույթ:

Արմեն Սմբատյանը 14.05.2010թ. դիմել է դատարան, պահանջելով Սերգեյ Սարգսյանից հոգուտ իրեն բռնագանձել 698.000 դրամ, որպես հանցագործությամբ պատճառված վնաս:

14.05.2010թ. դատավորի որոշմամբ հարուցվել է քաղաքացիական գործ և միացվել Ս. Սարգսյանի հայցադիմումով հարուցված վարչական գործին և նշանակվել քննության 02.06.2010թ.

31.05.2010թ. Սերգեյ Սարգսյանը լրացուցիչ հայցադիմումով դիմել է դատարան՝ պահանջելով Արմեն Սմբատյանից հոգուտ իրեն բռնագանձել 188.000 դրամ որպես հասցված վնասի փոխհատուցում և 3760 դրամ պետտուրք:

ԼՂՀ վարչական դատարանի 2010թ. հունիսի 10-ի վճռով հայցվոր (պատասխանող) Սերգեյ Սարգսյանի հայցը քննիչի որոշման մասը վերացնելու պահանջով բավարարվել է. ԼՂՀ ոստիկանության ՔՎ Հաղորդի քննչական խմբի քննիչ Ս. Առաքելյանի 06.04.2010թ. որոշումը «ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել «Միցիբուշի-Մոնտերո-Սպորտ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ս. Սարգսյանի կողմից ՃԵԿ-ի 72-րդ կետի 5-րդ մասի և ՃԵԱԱ մասին ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով» մասով ճանաչել անվավեր:

Սերգեյ Սարգսյանի՝ «Նյութերը ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության՝ նոր ստուգումներ կատարելու համար» պահանջի մասով գործի վարույթը կարճել է, իսկ Սերգեյ Սարգսյանի հայցը վնասի բռնագանձման պահանջի մասով բավարարել է մասնակիորեն՝ Արմեն Սմբատյանից բռնագանձելով 174.000 դրամ՝ հասցված վնասի և 3480 դրամ պետտուրքի մասով, մերժելով Արմեն Սմբատյանի հայցապահանջը:

Նշված վճռի դեմ Արմեն Սմբատյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Ս. Սարգսյանը և նրա ներկայացուցիչ Ա. Սարգսյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

ԼՂՀ վարչական դատարանը խախտել է վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 24-րդ հոդվածի և 40-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ, 60-րդ հոդվածների պահանջները, այն է՝ դատարանը խախտել է հայցի առարկայական ընդդատությունը, հաշվի չի առել, որ պահանջը քաղաքացիաիրավական է, և ոչ թե՝ վարչական, և գործը քննել է վարչական դատավարության կանոններով, որ դատարանը չի գնահատել ապացույցները գործում եղած բոլոր ապացույցների հետ միասին, առանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու գործի բոլոր հանգամանքները, կայացրել է անհիմն և անօրեն վճիռ:

Բողոք բերած անձը խնդրել է սույն վարչական գործով ամբողջովին բեկանել 10.06.2010թ. վճիռը և բավարարել իր հայցը, պատասխանողից բռնագանձելով նաև իր մուծած պետտուրքի գումարը:

## **3. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Ս. Սարգսյանը և նրա ներկայացուցիչ Ա. Սարգսյանն առարկել են վճռաբեկ բողոքի դեմ, գտնելով, որ վճռաբեկ բողոքն անհիմն է:

## **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով վճիռը ենթակա է ամբողջությամբ բեկանման և գործի վարույթը կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում բարձրացրել է առարկայական ընդդատության, ԼՂՀ վարչական դատարանի կողմից վարչական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու և ըստ էության քննության առնելու իրավաչափության հարցը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն առաջին ատյանի դատարանին ընդդատյա են բոլոր քրեական գործերը, ինչպես նաև քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր):

Առաջին ատյանի դատարանը քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում մինչդատական վարույթի նկատմամբ:

Սույն գործի նյութերի համաձայն՝ Սերգեյ Սարգսյանը դիմել է դատարան ԼՂՀ ոստիկանության ՔՎ քննիչ Ս. Առաքելյանի 06.04.2010թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մասնակիորեն վերացնելու և նյութերով լրացուցիչ ստուգում անցկացնելու պահանջով:

Սակայն դատարանը ԼՂՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու փոխարեն, հարուցել և պահանջը քննել է վարչական դատավարության կարգով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Մինչդեռ, սույն գործով Արմեն Սմբատյանը դիմել է դատարան Սերգեյ Սարգսյանից հօգուտ իրեն 698.000 դրամ՝ հանցագործությամբ պատճառված վնասը բռնագանձելու պահանջով, իսկ Սերգեյ Սարգսյանը դիմել է դատարան Արմեն Սմբատյանից 188.000 դրամ բռնագանձելու պահանջով, որոնք ընդդատյա են ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին և ենթակա են քննության ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով, սակայն դատավորի որոշմամբ միացվել են մեկ վարույթում և քննվել վարչական դատավարության կանոններով:

ԼՂՀ վարչական դատարանի վերը շարադրված խախտումները Գերագույն դատարանը գտնում է բավարար սույն վարչական գործով ամբողջությամբ վճիռը բեկանելու և գործի վարույթը կարճելու համար:

Գերագույն դատարանը հաշվի առնելով որոշման մեջ նշված վերոնշյալ պատճառաբանությունները, վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ վարչական դատարանի 2010թ. հունիսի 10-ի վճիռը ամբողջությամբ բեկանել և գործի վարույթը կարճել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Կ. ՂԱՐԱՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

**Շ. ՕՉԱՆՅԱՆ**

**Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**